ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 24 » հունվարի 2022թ. № 56

«ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի 2022 թվականի հունվարի 20-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02847546) տալ «ք. Սպիտակ, Երևանյան խճուղի 81» հասցեում գտնվող վառելիքի լցման կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն՝ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հունվարի 24
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» հունվարի 2022թ. № 57

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 41 ՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 01/113.3/10301-2021 գրությանը կից Սպիտակ համայնքի ղեկավարին է ներկայացվել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 41 որոշումը, և գրությամբ առաջարկվել է միջոցներ ձեռնարկել ակտն անվավեր ճանաչելու կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 01/113.3/10301-2021 գրության հիման վրա հարուցվել է վարչական վարույթ:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 20-ի «Լեռնավան համայնքի ղեկավարի 29.06.2020 թվականի թիվ 17 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 41 որոշմամբ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2020 թվականի հունիսի 29-ի «06-042-0005-0016 ծածկագրի տակ գտնվող բնակելի տան և հողամասի նկատմամբ իրավունքները վերականգնելու մասին» թիվ 17 որոշման մեջ կատարվել են փոփոխություններ և լրացումներ:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 41 որոշումը ստորագրել է Լեռնավանի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Հրաչյա Պարսամյանը:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ աշխատակազմի քարտուղարը օրենքով, նորմատիվ իրավական այլ ակտերով և աշխատակազմի կանոնադրությամբ

սահմանված իր լիազորությունների և գործառույթների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2 մասով սահմանված է.

«Սույն օրենքով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին վերաբերող օրենսդրական տեխնիկայի, նորմատիվ իրավական ակտի կառուցվածքի, նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու, նորմատիվ իրավական ակտերի գործողությունը դադարեցնելու, ժամկետների հաշվարկման վերաբերյալ դրույթների գործողությունը տարածվում է անհատական և ներքին իրավական ակտերի վրա, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ այն նորմատիվ իրավական ակտով, որով նախատեսվել է անհատական կամ ներքին իրավական ակտի ընդունում»:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտերում փոփոխություն կամ լրացում կատարում է միայն այդ նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմինը կամ նրա իրավահաջորդը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում, շահերի բախման իրավիճակում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել այդ ակտն ընդունող վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, ինչպես նաև դատական կարգով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է.

«Ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել, եթե ակտի հասցեատերն իրավունք ունի վստահելու վարչական ակտի գոյությանը, և վերջինիս գործողության մեջ գտնվելը չի կարող վնաս պատճառել որևէ անձի իրավունքներին, Հայաստանի Հանրապետությանը կամ որևէ համայնքի:

Վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք ունի, եթե վարչական ակտի հիման վրա ստացածն արդեն իսկ օգտագործել կամ տնօրինել է, ինչպես նաև, եթե ակտի հիման վրա ստացածի հետ վերադարձնելը վնաս կպատճառի վարչական ակտի հասցեատիրոջը»:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 41 որոշումն ընդունելու դրությամբ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3.2-րդ և 4-րդ մասերի ուժով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններն արդեն դադարած են եղել, իսկ Լեռնավան համայնքի իրավահաջորդը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքն է:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավանի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը, չունենալով համայնքի ղեկավարի որոշում ընդունելու լիազորություն, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 41 որոշումն ընդունել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3.2-րդ և 4-րդ մասերի խախտումներով, այդ թվում՝ սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Միևնույն ժամանակ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 41 որոշման հասցեատերեր Արմանուշ Մեսրոպի Մկրտչյանը, Հովիկ Համբարձումի Տոնոյանը, Արման Համբարձումի Տոնոյանը, Հերմինե Համբարձումի Տոնոյանը, Գյուլնարա Լիպարիտի Սիրունյանը որոշման գոյությանը վստահելու իրավունք են ունեցել, ինչը հաստատվում է այն փաստով, որ նրանք դիմել են Կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքը գրանցելու համար, և 2021 թվականի դեկտեմբերի 23-ին, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 41 որոշման հիման վրա գրանցվել է նրանց ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը 06-042-0005-0016 կադաստրային ծածկագրով 0,06441 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 108,04 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան նկատմամբ, ինչը հաստատվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23122021-06-0044 վկայականով:

Բացի այդ, հարուցված վարչական վարույթի քննարկման արդյունքում պարզվեց, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 41 որոշման գործողության մեջ գտնվելը չի կարող վնաս պատճառել որևէ անձի իրավունքներին, Հայաստանի Հանրապետությանը կամ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 20-ի «Լեռնավան համայնքի ղեկավարի 29.06.2020 թվականի թիվ 17 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 41 որոշման իրավաչափության հարցը քննարկելու վերաբերյալ հարուցված վարչական վարույթը կարճել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հունվարի 24
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» հունվարի 2022թ. № 58

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 43 ՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 01/113.3/10301-2021 գրությանը կից Սպիտակ համայնքի ղեկավարին է ներկայացվել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 43 որոշումը, և գրությամբ առաջարկվել է միջոցներ ձեռնարկել ակտն անվավեր ճանաչելու կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 01/113.3/10301-2021 գրության հիման վրա հարուցվել է վարչական վարույթ:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 22-ի «Անշարժ գույքի հասցեավորման մասին» թիվ 43 որոշմամբ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքում 06-042-0045-0017 ծածկագրով հողամասին տրամադրվել է հասցե:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 43 որոշումը ստորագրել է Լեռնավանի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Հրաչյա Պարսամյանը:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ աշխատակազմի քարտուղարը օրենքով, նորմատիվ իրավական այլ ակտերով և աշխատակազմի կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների և գործառույթների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման հավելվածի 50-րդ կետի համաձայն՝ համայնքների տարածքում տեղակայված անշարժ գույքը հասցեավորում են համայնքի ղեկավարները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում, շահերի բախման իրավիճակում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել այդ ակտն ընդունող վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, ինչպես նաև դատական կարգով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է.

«Ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել, եթե ակտի հասցեատերն իրավունք ունի վստահելու վարչական ակտի գոյությանը, և վերջինիս գործողության մեջ գտնվելը չի կարող վնաս պատճառել որևէ անձի իրավունքներին, Հայաստանի Հանրապետությանը կամ որևէ համայնքի:

Վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք ունի, եթե վարչական ակտի հիման վրա ստացածն արդեն իսկ օգտագործել կամ տնօրինել է, ինչպես նաև, եթե ակտի հիման վրա ստացածի հետ վերադարձնելը վնաս կպատճառի վարչական ակտի հասցեատիրոջը»:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 43 որոշումն ընդունելու դրությամբ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3.2-րդ և 4-րդ մասերի ուժով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններն արդեն դադարած են եղել, իսկ Լեռնավան համայնքի իրավահաջորդը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքն է:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավանի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը, չունենալով համայնքի ղեկավարի որոշում ընդունելու լիազորություն, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի

ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 43 որոշումն ընդունել է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3.2-րդ և 4-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման հավելվածի 50-րդ կետի խախտումներով, այդ թվում՝ սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Միևնույն ժամանակ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 43 որոշման հասցեատեր Լորիկ Ռազմիկի Չախալյանը որոշման գոյությանը վստահելու իրավունք է ունեցել, ինչը հաստատվում է այն փաստով, որ դիմել է Կադաստրի կոմիտե՝ իրեն ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2021 թվականի դեկտեմբերի 3-ի վկայագրի փոխանցված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և տրամադրված հասցեն գրանցելու համար, ինչը հաստատվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 2021 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 27122021-06-0059 վկայականով:

Բացի այդ, հարուցված վարչական վարույթի քննարկման արդյունքում պարզվեց, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 43 որոշման գործողության մեջ գտնվելը չի կարող վնաս պատճառել որևէ անձի իրավունքներին, Հայաստանի Հանրապետությանը կամ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 22-ի «Անշարժ գույքի հասցեավորման մասին» թիվ 43 որոշման իրավաչափության հարցը քննարկելու վերաբերյալ հարուցված վարչական վարույթը կարճել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հունվարի 24
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
«24» հունվարի 2022թ. № 59

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 44 ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 01/113.3/10301-2021 գրությանը կից Սպիտակ համայնքի ղեկավարին է ներկայացվել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 44 որոշումը, և գրությամբ առաջարկվել է միջոցներ ձեռնարկել ակտն անվավեր ճանաչելու կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 01/113.3/10301-2021 գրության հիման վրա հարուցվել է վարչական վարույթ:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Անասնագլխաքանակի հաշվառման հանձնաժողով կազմելու մասին» թիվ 44 որոշմամբ Լոռու մարզի Լեռնավան համայնքում կազմվել է անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքները կազմակերպող և անցկացնող համատեղ հանձնաժողով:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 44 որոշումը ստորագրել է Լեռնավանի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Հրաչյա Պարսամյանը:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ աշխատակազմի քարտուղարը օրենքով, նորմատիվ իրավական այլ ակտերով և աշխատակազմի կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների և գործառույթների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ

չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում, շահերի բախման իրավիճակում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել այդ ակտն ընդունող վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, ինչպես նաև դատական կարգով:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Անասնագլխաքանակի հաշվառման հանձնաժողով կազմելու մասին» թիվ 44 որոշումն ընդունելու դրությամբ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3.2-րդ և 4-րդ մասերի ուժով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններն արդեն դադարած են եղել, իսկ Լեռնավան համայնքի իրավահաջորդը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքն է:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավանի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը, չունենալով համայնքի ղեկավարի որոշում ընդունելու լիազորություն, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Անասնագլխաքանակի հաշվառման հանձնաժողով կազմելու մասին» թիվ 44 որոշումն ընդունել է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3.2-րդ և 4-րդ մասերի խախտումներով, այդ թվում՝ սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Անասնագլխաքանակի հաշվառման հանձնաժողով կազմելու մասին» թիվ 44 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հունվարի 24
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«24» հունվարի 2022թ. № 60

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 45 ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 01/113.3/10301-2021 գրությանը կից Սպիտակ համայնքի ղեկավարին է ներկայացվել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 45 որոշումը, և գրությամբ առաջարկվել է միջոցներ ձեռնարկել ակտն անվավեր ճանաչելու կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 01/113.3/10301-2021 գրության հիման վրա հարուցվել է վարչական վարույթ:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Համայնքապետարանի աշխատակցին պարգևատրելու մասին» թիվ 45 որոշմամբ Լեռնավանի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Հրաչյա Պարսամյանին տրամադրվել է պարգևատրում 165 000 Հայաստանի Հանրապետության դրամ:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 45 որոշումը ստորագրել է Լեռնավանի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Հրաչյա Պարսամյանը:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ պարբերության համաձայն՝ պարգևատրումը օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով, գործատուի իրավական ակտով սահմանված կարգով և չափերով աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարելու, երկարամյա աշխատանքի և ծառայության, ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու համար

ամսական, եռամսյակային, կիսամյակային պարբերականությամբ կամ մեկանգամյա վճարվող վարձատրությունն է:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար գործատուն կարող է խրախուսել աշխատողներին:

Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով աշխատողի նկատմամբ կարող է կիրառվել միանվագ դրամական պարգևատրում:

«Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն երկարամյա ծառայության, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կամ հատուկ առաջադրանքները որակյալ կատարելու համար համայնքային ծառայողի նկատմամբ կարող է կիրառվել միանվագ դրամական պարգևատրում:

Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված է.

«Համայնքային ծառայողի նկատմամբ սույն հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ», «դ» և «զ» կետերով նախատեսված խրախուսանքները կիրառում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը»:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված է, որ աշխատակազմի քարտուղարին օրենքով սահմանված կարգով նշանակում և ազատում է համայնքի ղեկավարը:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ աշխատակազմի քարտուղարը օրենքով, նորմատիվ իրավական այլ ակտերով և աշխատակազմի կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների և գործառույթների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում, շահերի բախման իրավիճակում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել այդ ակտն ընդունող վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, ինչպես նաև դատական կարգով:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Համայնքապետարանի աշխատակցին պարգևատրելու մասին» թիվ 45 որոշումն ընդունելու դրությամբ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3.2-րդ և 4-րդ մասերի ուժով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններն արդեն դադարած են եղել, իսկ Լեռնավան համայնքի իրավահաջորդը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքն է:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավանի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը, չունենալով ինքն իր նկատմամբ կարգապահական խրախուսանք կիրառելու լիազորություն, չունենալով համայնքի ղեկավարի որոշում ընդունելու լիազորություն, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Համայնքապետարանի աշխատակցին պարգևատրելու մասին» թիվ 45 որոշումն ընդունել է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3.2-րդ և 4-րդ մասերի խախտումներով, այդ թվում՝ սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով՝ համայնքի բյուջեին պատճառելով 126 000 Հայաստանի Հանրապետության դրամի չափով վնաս, քանի որ Հրաչյա Պարսամյանի առձեռն ստացած դրամական պարգևատրման չափը կազմել է 126 000 Հայաստանի Հանրապետության դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ և 64-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

1. Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Համայնքապետարանի աշխատակցին պարգևատրելու մասին» թիվ 45 որոշումը:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավանի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Հրաչյա Պարսամյանից գանձել 126 000 Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հրաչյա Պարսամյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը վարչական կամ դատական կարգով կարող է բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հունվարի 24
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«25» հունվարի 2022թ. № 61

ՆՎԵՐ ԳԵՎՈՐԳԻ ՉԱԽԱԼՅԱՆԻՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐՈՎ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ և 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2022 թվականի հունվարի 21-ի վկայագիրը (գրանցված է սեղանամատյանում N185), Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06042VXSL6EI) և Նվեր Գևորգի Չախալյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Նվեր Գևորգի Չախալյանին ժառանգաբար փոխանցված 06-042-0011-0041 կադաստրային ծածկագրով, 0,075 հա մակերեսով հողամասին տրամադրել «Սպիտակ համայնք, գ.Լեռնավան, 13-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 6» հասցեն (փոստային դասիչը՝ 1811):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հունվարի 25
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«25» հունվարի 2022թ. № 62

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի ԹԻՎ 155 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2004 թվականի հուլիսի 19-ի թիվ 155 որոշման մեջ Սեդա Արշավիրի Հովակիմյանի հայրանունը սխալմամբ գրվել է «Արշալույսի», հիմք ընդունելով Սեդա Արշավիրի Հովակիմյանի անձնագիրը և դիմումը՝ որոշում եմ.

1. Սպիտակի քաղաքապետի 2004 թվականի հուլիսի 19-ի «Սպիտակի համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» թիվ 155 որոշման մեջ նշված «Արշալույսի» բառը փոխարինել «Արշավիրի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հունվարի 25
ք. Սպիտակ